

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/2

15 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արտավազդ Երեմյանի 16.02.2016թ-ի գանգատը պարտավորությունների վերահաշվարկ կատարելու վերաբերյալ:

#### **Ա/Ձ Արտավազդ Երեմյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Արտավազդ Երեմյանը հայտնում է, որ ՀՀ տնտեսական դատարանի 18.05.2007թ-ի թիվ S-1769 վճռի համաձայն ՀՀ ԿԱ ՀՊԾ Դավթաշենի հարկային տեսչության հայցը բավարարվել է մասնակի, այն է՝ Ա/Ձ Արտավազդ Երեմյանից որոշվել է բռնագանձել 50.300 դրամ հաստատագրված վճար և 36.600 դրամ տույժ, իսկ սուցիալական վճարի գծով 369.400 դրամ պարտավորության գումար գանձելու մասով հայցը մերժվել է:

Նշված վճիռը չի բողոքարկվել և այն ստացել է օրինական ուժ: Վճռով հաստատված գումարները Ա/Ձ Արտավազդ Երեմյանի կողմից վճարվել է 20.06.2007թ-ին, սակայն մինչ օրս վճռի մերժված մասով (սուցիալական վճարի գծով) անձնական հաշվի քարտերում վերահաշվարկ չի կատարվել:

Ա/Ձ Արտավազդ Երեմյանը հայտնում է նաև, որ դիմել է ՀՀ պետական ռեգիստրի գործակալություն գործունեությունը դադարեցնելու համար և սահմանված կարգով լուծարվել է:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արտավազդ Երեմյանը խնդրում է կատարել անձնական հաշվի քարտում առկա սոցիալական վճարի գծով պարտավորությունների վերահաշվարկ:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Արտավազդ Երեմյանի անձնական հաշվի քարտում առկա տվյալների համաձայն սոցիալական վճարի գծով պարտավորությունը կազմում է ընդամենը 332.673 դրամ, այդ թվում՝ ապառք 214.959 դրամ, տույժ 117.714 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 2007թ-ի մարտ ամսից մինչև 08.09.2010թ. (լուծարման պահը) ընկած ժամանակահատվածում հաշվարկված նվազագույն սոցիալական վճարի գումարներից:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պնդումներին, որ չեն կատարվել ՀՀ տնտեսական դատարանի 18.05.2007թ-ի թիվ S-1769 վճռի պահանջները՝ չի կատարվել սոցիալական վճարի գծով առկա պարտավորությունների վերահաշվարկ, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ հայցադիմումը ներկայացվելու օրվա՝ 19.03.2007թ-ի դրությամբ, Ա/Ձ Արտավազդ Երեմյանի սոցիալական վճարի գծով պարտավորությունը կազմել է ընդամենը 369.400, այդ թվում՝ սոցիալական վճարի ապառք 250.000 դրամ, տույժ 119.400 դրամ:

Տվյալ դեպքում վերոգրյալ վճիռն օրինական ուժ ստանալուց հետո սոցիալական վճարի գծով առկա պարտավորությունը՝ ընդհանուր գումարով 369.400 դրամ, նվազեցվել է Ա/Ձ Արտավազդ Երեմյանի սոցիալական վճարի անձնական հաշվի քարտից: Այսինքն, գանգատում բերված պնդումները՝ ՀՀ տնտեսական դատարանի 18.05.2007թ-ի թիվ S-1769 վճռի պահանջները կատարված չլինելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

Միևնույն ժամանակ հարկ է նշել նաև, որ հարկային տեսչության կողմից Ա/Ձ Արտավազդ Երեմյանին 10.11.2008թ-ին ուղարկվել է ծանուցագիր, որով հայտնվել է այն մասին, որ 21.08.2008թ. «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտոնություններից օգտվելու համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան դիմում: Մասնավորապես, 21.08.2008թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված իրավունքից օգտվելու համար անհատ ձեռնարկատերը պարտավոր է ներկայացնել գրավոր դիմում իր հաշվառման (գրանցման) վայրի հարկային տեսչության մարմին»:

Քննարկվող դեպքում համապատասխան դիմում Ա/Ձ Արտավազդ Երեմյանի կողմից չի ներկայացվել, որի հետևանքով նաև նա չի օգտվել վերոգրյալ օրենքով նախատեսված արտոնություններից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

### ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Արտավազդ Երեմյանի 16.02.2016թ-ի գանգատը՝ պարտավորությունների վերահաշվարկ կատարելու վերաբերյալ, մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ